ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Ֆիզիկա-մաթեմատ. գիտություններ XVI, № 4, 1963 Физико-математические науки

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Բ. Պետրոսյան

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ X ԿՈՆԳՐԵՍԸ

Տարեցտարի լայնանում է սովետական գիտնականների կապը արտասահմանյան գիտնականների հետ։ Այդ կապը իրականացվում է տարբեր ձևերով. մի կողմից՝ սովետական և արտասահմանյան գիտնականները կատարում են փոխադարձ այցելություններ՝ ծանոթանալու այս կամ այն ազգային ակադեմիաների, համալսարանների, ինստիտուտների, ֆակուլտետների, լաբորատորիաների գիտական կոլեկտիվների աշխատանքներին, մյուս կողմից՝ կապը կենսագործվում է միջազգային գիտական կազմակերպությունների գործունեության միջոցով։

Գիտության պատմաբանները նույնպես, ինչպես մյուս բնագավառների գիտնականները, համատեղ աշխատակցելու, փորձի փոխանակում կատարելու, բնագիտության և տեխնիկայի պատմության սկզբունքային պրոբլեմները լայն կերպով քննարկելու նպատակով ստեղծում են միջազգային կազմակերպություններ։ Գիտության պատմության առաջին միջազգային կոնգրեսը տեղի է ունեցել Փարիզում, 1929 թվականին։ Այդ կոնգրեսում հիմնադրվել է գիտության պատմության միջազգային ակադեմիան։

Երկրորդ կոնգրեսը տեղի է ունեցել Լոնդոնում, 1931 թվականին, երրորդը՝ Օպորտո-Կոիմբրե-Լիսաբոնում, 1934 թվականին, չորրորդը՝ Պրագայում, 1937 թվականին, հինգերորդը՝ Լոզանում, 1947 թվականին, որտեղ Յունեսկոյի նախաձեռնությամբ կազմակերպվել է գիտության պատմության միջազգային միություն։ Վեցերորդը կոնգրեսը տեղի է ունեցել Ամստերդամում, 1950 թվականին, յոթերորդը՝ Երուսաղեմում, 1953 թվականին, ութերորդը՝ Ֆլորենցիա ու Միլան քաղաքներում, 1956 թվականին, իններորդը՝ Մադրիդ ու Բարսելոնա քաղաքներում, 1959 թվականին։

* * *

Գիտության պատմության միջազգային տասներորդ կոնգրեսը տեղի ունեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգների Իտակա և Ֆիլադելֆիա քաղաքներում, 1962 թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 2-ը։

Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին շուրջ 500 պատվիրակներ։ Սովետական Միությունից կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին 14 գիտնականներ, այդ թվում 10-ը՝ Մոսկվայից, 1-ը՝ Լենինգրադից, 2-ը՝ Կիևից, 1-ը՝ Երևանից։

Կոնգրեսի սիմպոզիումներում և սեկցիոն նիստերում, որոնք հաջորդում էին իրար, կարդացվեց մոտավորապես 250 զեկուցում, նվիրված բնագիտու-

թյան և տեխնիկայի պատմության հարցերին՝ սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը։

Սովետական Միության պատվիրակները կոնգրեսի սիմպոզիումներում և սեկցիոն նիստերում հանդես եկան 12 զեկուցումով։

Մեծ հետաքրքրություն առաջացրին պրոֆ. Ա. Տ. Գրիգորյանի զեկուցումը՝ համաշխարհային աերոդինամիկայի զարգացման մեջ ռուս գիտնականների ավանդի մասին, պրոֆ. Ա. Պ. Յուշկևիչի զեկուցումը Պետերբուրգի մաթեմատիկական դպրոցի մասին, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆ. Կ. Կ. Խրենովի զեկուցումը Սովետական Միությունում էլեկտրաղողման տեխնիկայի զարգացման պատմության մասին, պրոֆ. Վ. Պ. Ջուրովի զեկուցումը վերածնության դարաշրջանում տեխնիկական ու գիտական փորձերի մասին և այլն։

Մեր զեկուցումը նվիրված էր հույն մաթեմատիկոս Եվկլիդեսի երկրաչափության հայերեն վերամշակված տեքստի վերջերս հայտնաբերված ձեռագրի հետազոտմանը, որը կատարվել է Երևանի Պետական համալսարանի պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի հետ համատեղ։ Պետք է նշել, որ այդ ձեռագիրը գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Կանադա քաղաքի հայ բնակիչ, բանասեր Հարություն Քյուրդյանի ձեռագրական ֆոնդում։ Այդ ձեռագրի տեքստը, որը ունի «Երկրաչափութիւն Եվկլիտին» վերնագիրը, լույս տեսավ 1962 թվականի վերջերին Երևանում, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Գրքի ծավալը 20 տպագրական մամուլ է։

Ճասերորդ կոնգրեսը գիտության պատմաբանների միջազգային միավորման ու նրանց հաղորդակցման բարձրագույն ձևը հանդիսացավ։ Հինգ մայրցամաքների գիտնականները կատարեցին փորձի փոխանակում, լայնորեն քննարկեցին սկզբունքային պրոբլեմներ, առաջ քաշեցին բնագիտության և տեխնիկայի պատմության նոր հարցեր։ Կոնգրեսը ցույց տվեց, թե գիտության հետագա զարգացման համար որքա՞ն կարևոր է ամբողջ աշխարհի գիտնականների ստեղծագործական համագործակցությունը։

Գիտության պատմության միջազգային միության և ակադեմիայի ղեկավար մարմինների մեջ Սովետական-Միությունից ընտրվեցին 8 մարդ։ Միության փոխ-պրեզիդենտ ընտրվեց պրոֆ. Ա. Տ. Գրիգորյանը, ինչ ընտրեցին գիտության և տեխնիկայի պատմության դասավանդման միջազգային հանձնաժողովի կազմում։

* * *

Ամերիկայի Միացյալ Նահանգներում 18 օր գտնվելու ընթացքում այս տողերի հեղինակին վիճակվեց լինել շատ քաղաքներում, այդ թվում Նյու-Յորք, Վաշինգտոն, Ռիչմոնդ քաղաքներում, և հետաքրքրական հանդիպումներ ու զրույցներ ունենալ այդ երկրի գիտնականների, բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ։

Հատկապես տպավորիչ էր հանդիպումը ԱՄՆ-ի հայկական գաղութի ներկայացուցիչների հետ, որ տեղի ունեցավ Նյուջերսիի նահանգի Լեյկ-Վուդ գեղատեսիլ քաղաքում, որը գտնվում է Նյու-Յորքից 100 կիլոմետր հեռավորության վրա։ Այդ հանդիպմանը մասնակցում էին տարբեր տարիքի շուրջ 250 հայեր։ Նրանց թվում էին առաջադիմական հայերի Ամերիկյան միության ղե-

կավար Օգսեն Սարյանը, բանաստեղծ Կարապետ Սիսալը, Արշավիր Քաղցրունին, «Լրաբեր» թերթի խմբագիր Մարտիկ Մարտենցը և ուրիշներ։

Ներկաները բուռն հետաքրքրություն ցուցաբերեցին Սովետական Հայաստանի գիտության ու կուլտուրայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառներում ձեռք բերված նվաճումների նկատմամբ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вопросы истории естествознания и техники, вып. 2, М., 1956.
2. Xth International Congress history of science, Abstracts, 1962, Ithaca—Philadelphia.

Բնագիտության և տեխնիկայի
պատմության խորհուրդ

Ստացված է 15 I 1963